

Արդարացի անախատի հայտարարությունը և պաշտոնական այցելությունը մի քանի ամիս անց հասավ Մոսկու: Ենթադրյալ բանակցությունները և ընթացքին կր սպասվի, որ ստորագրուի շարք մը համաձայնություններ: Բանակցությունները գլխավոր նիւթը պիտի ըլլայ Արդարացի կապալայի շրջանի ռատարի վարձակալությունը հարցը: Կապալայի ռատարը, որ կառուցուած է խորհրդային շրջանին եւ ցարդ կը մնայ ռուսական հսկողութեան տակ, կրնայ նախապայմանաբար միջոցաւ անախատի հարցը մը դիմել շրջան արձակման պարագային: Կր սպասուի, որ ստորագրուի նաեւ տնտեսական համագործակցութեան շուրջ համաձայնագիր մը:

Ռուսիոյ նախագահ վլադիմիր Փութինի հետ Ալիեւի հանդիպումը պիտի կայանայ այսօր: Հաւանական է, որ Փութին եւ Ալիեւ քննարկեն Լեոնային Ղարաբաղի տագնապի հարցը, ինչպէս նաեւ Կասպից ծովու ու ծանիւրի պահեստներու բաժանման առնչուող հարցեր:

ԱՄՐԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՒՂՂՈՒԻՆ ԴԵՊԻ ԻՍՐԱՅԷԼ

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ ԵՒ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ԷԼԻ ՇՐՊԷՅՔԱ ԶՈՐ ԳՆԱՑ ԱԿԱՆՈՒՄԸ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՄԸ ՊԱՅԹՈՒՄԻՆ

Նախկին նախարար եւ երեսփոխան Էլի Շրպէյքա երէկ կողմնակալ ակնուած ինքնաշարժի պայթումի մը:

Հրպայքա եւ իր երեք թիկնապահները տեղւոյն վրայ սպանուեցան, երբ անոր «Ռէյնո Ռոլըր» տիպի ինքնաշարժը կ'անցնէր Հապիթի մէջ «Մերսեդես»-ի մը կողքին: «Մերսեդես»-ին մէջ կ'ընդունուած 10 քիլոկրամ թէ. Էն. Թէ.ն

պայթեցաւ հեռուոր սարքով մը:

Պայթումին ուժգնութիւնը բազմապատկուեցաւ Հրպայքայի ինքնաշարժին մէջ գտնուող սուպուրու յատուկ «օքսիժէն»-ի շիշերուն պայթումին պատճառով: Հրպայքայի եւ անոր ընկերակցողներուն դիակները ինքնաշարժին աւելի քան 20 մետր հեռու վայրի մէջ գտնուեցան, իսկ պայթումը պատճառեց



Հրպայքայի ինքնաշարժը՝ աջից, եւ անոր թիկնապահին ինքնաշարժը՝ ձախից, բոցերու մէջ, պայթումէն աճմիջապէս ետք:

իրողները մտակալ շէնքերու մէջ: Վիրաւորուեցան ինքնաշարժիներ:

Բանակի, ներքին ապահովութեան, քաղաքային պաշտպանութեան եւ հրշէջ ուժեր փութացին դէպքին վայրը:

Հրպայքայի սպանութեան լուսին տակ, ներքին գործոց նախարար Էլիաս Մըրկէսօրէ ետք նախագահեց Ապահովութեան Կեդրոնական Խորհուրդի արտակարգ նիստի մը:

Արդարադատու-

թեան նախարար Սամիր Շըսը, քրեական հետաքննութեան օրէնքի քննարկումին նուիրուած ընդհանուր դատախապներու եւ աւագ քննիչ դատախապներու ժո-

Շարք՝ էջ 2

ՀՐԱՊԱՐԱԿԱԻ ՊԻՏԻ ԴԱՏԵՆՔ ՈՒՍԱՄԱ ՊԸՆ ԼԱՏԷՆԸ ԵՒ ՄՈՂԼԱ ՕՄԱՐԸ

Կ'ԸՍԷ Հ. ԶԱՐԶԱՅ

Աֆղան ղեկավարներ երէկ կը շեշտէին ապահովութեան կարեւորութիւնը՝ իրենց երկրին վերակառուցման համար, մինչ նախագահ Ճորճ Պուշ կը յայտարարէր երկու տասնամեակներու ամերիկեան զինուորական պիտեճէին մեծագոյն աճին մասին ծրագիրներ:

Փոխանցման կառավարութեան ղեկավար Համիտ Քարզայ յայտնած է, թէ

ապահովութիւնը, կրթութիւնը, առողջապահութիւնը եւ ճամբաները թիւ մէկ առաջնահերթութիւնները կը կազմեն թոքթոյնի խորհրդաժողովին խոստացած 4,5 միլիարտ տոլար գումարը ծախսելու համար:

Ան Զինաստան այցելութեան մը ըն-

Շարք՝ էջ 3

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒՇԵՐՈՒ

ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐԸ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Իսրայէլեան ուժերը պաղեստինեան ապահովութեան ուժեր պատասխանատու մը սպաննեցին երէկ Ռամալլայի մէջ, յայտնեցին պաղեստինեան աղբիւրներ:

Իսրայէլեան բանակը յայտնեց, որ տեղւոյն պաղեստինցի սպայ մը սպաննուած է: Բանակը աւելցուց, որ հետաքննութիւնը պիտի բանայ ստուգելու համար իրականութիւնը: Բանակին մէկ բանբերը ըսաւ, որ սպան կրնայ սպաննուած ըլլալ պաղեստինցի պինդակներու եւ իսրայէլեան ուժերու միջեւ արձանագրուած բախումի մը ընթացքին:

Պաղեստինեան աղբիւրի մը համաձայն, 23 տարեկան Ռիատ Խաթապ սպաննուած է իսրայէլացի արձակապէսի մը կողմէ, բախումին վերջ տրուելէն ետք: Իսրայէլեան ուժերը կը շարունակեն շրջափակուած պահել Ռամալլան, ուր աւելի

քան ամիսէ մը ի վեր արգելափակուած կը մնայ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատը:

Միւս կողմէ, Իսրայէլի խորհրդարանի նախագահ Արախաբ Պըրկ պատրաստակամութիւն յայտնած է ընդառաջելու պաղեստինեան խորհրդարանը այցելելու եւ ճան մը արտասանելու հրաւերին: Պըրկի բանբերը ըսաւ, որ թէեւ վարչապետ Արիէլ Շարոն կ'առարկէ, սակայն Պըրկ ընդունած է հրաւերը, որ ուղղուած էր պաղեստինեան խորհրդարանի նախագահ Ահմետ Քորէյի (Ապու Ալա) կողմէ:

մէ: Քորէյ հրաւերը ուղղած է Չորեքշաբթի օր, Փարիզի մէջ, ուր հանդիպում մը ունեցած էր Պըրկի հետ: Բանբերը յայտնեց, որ տակաւին թուական մը չէ ճշդուած Պըրկի այցելութեան մասին:

●ԱՐԱՅԱԹ կը յաջողեց Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնի միջամտելու, որպէս պի վերջ տրուի պաղեստինեան շրջաններուն դէմ իսրայէլեան յարձակումներուն: «ԻՆՍ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ պաղեստինցի նախարար Ալլապա Ահմետ Արաֆատի նամակը յանձնուած է Սատամի:

(ՌՈՅԹԸՐԶ)

Statement

Within the framework of the consolidation of the Lebanese banking sector, Banque Libano-Française sal and Banque Saradar sal had initiated discussions to consolidate their activities.

This economically and socially complicated transaction did not succeed and by mutual agreement, the Banks have decided to end the discussions.

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ

Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, բաղկացած Հ. Յ. Դ. Բիրոյի անդամ եւ Հայաստանի Ազգային Ժողովի պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործերու մշտական յանձնաժողովի նախագահ Վահան Յովհաննիսեանէ, Հ. Յ. Դ. Բիրոյի անդամ Երուանդ Փամպուքեանէ եւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Միխրաբեանէ, երէկ կէսօրուան ժամը 1:00ին այցելեց Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանին:

Խորհրդակցութիւնները կեդրոնացան Լիբանան - Հայաստան միջպետական փոխ յարաբերութիւններուն, Հայաստան - Սփիւռք խորհրդաժողովի նախապատրաստական աշխատանքներուն, կովկասեան եւ միջին արեւելեան շրջանային խնդիրներուն, ինչպէս նաեւ՝ Հայաստանի դեսպանութիւն - լիբանանահայ գաղութ գործակցութեան ծրագիրներուն վրայ:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻՒՆ



Գեղամ Եպս. Խաչերեան վարչապետին մօտ:

Հինգշաբթի, 24 Յունուար 2002ին, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի, վարչապետարանին մէջ: Առաջնորդ սրբազան Տօր Կ'ընկերանային Ազգային Քաղաքական Ժողովին ատենապետ՝ Վահագն Դաւիթեան եւ անդամներ՝ Գէորգ Քէչիշեան եւ Վրէժ Սպարտակեան:

Առաջնորդ սրբազանը վարչապետին իր գոհունակութիւնը յայտնեց, որ Ս. Նշան Մայր եկեղեցւոյ կրկնազգապատկան կալուածներու առկախ հարցերը վարչապետին անմիջական հսկողութեամբ բարեօր լուծման յանգեցան Սոլիտերի հետ համաձայնագիրով մը, որ Ս. Նշան Մայր եկեղեցւոյ եւ անոր շրջափակը արժեւորելու եւ զեղեցկացնելու լայն կարելիութիւններ կու տայ:

Նոյն առիթով, առաջնորդ սրբազանը վարչապետին ուղարկութեան յանձնեց Հայ համայնքի անտեսուած իրաւունքներուն պահանջը:

Վարչապետը դրուատիրով խօսեցաւ Լիբանանի հայութեան եւ անոր գերակատարութեան մասին, շեշտելով, որ հայութիւնը Լիբանանի անբաժան մասնիկն է եւ իր արդարեւ կը մասնակցի լիբանանեան կեանքին: Ան յայտնեց, որ սպազայ ծրագիրներու գծով նաեւ պատրաստ է օգտակար ըլլալու:

ԵԱԿԻ ՆԱԽԱԳԱՐԸ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ԶԱՅԱՍՏԱՆ, ԱԶՐՊԷՅՔԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ

ԵԱԿԻ Պարուի գրասենեակի հաղորդումին համաձայն, ԵԱԿԻ նոր նախագահ, Փորթուզալի արտաքին գործոց նախարար Խայմէ Կամա Փետրուարի վերջաւորութեան կամ Մարտի սկիզբը աշխատանքային այցելութիւններ պիտի կատարէ Հայաստան, Ազգային Կառուցման եւ Վրաստան: Կամա ԵԱԿԻ նախագահի իր պաշտօնը ստանձնեց Յունուար 2002ի սկիզբը:

Խայմէ Կամա անցեալ տարուան Յունիսին այցելած էր Ազգային Կառուցման Կոմիտէի «Կազէր 525» թերթին համաձայն, Կամա Պարուի մէջ արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլլիեի հետ քննարկած է հարցեր ԵԱԿԻ Փորթուզալի նախագահութեան վերաբերեալ: Ըստ թերթին, Կամա յայտարարած է, որ իրեր ԵԱԿԻ նախագահ իր պաշտօնավարութեան ընթացքին ճիշդ պիտի չխնայէ Լեոնային Ղարաբաղի տագնապին վերջնական լուծում մը գտնելու համար: Փորթուզալի արտաքին գործոց նախարարը յատկապէս յայտնած է, որ պիտի փորձէ աւելի յանախապի դարձնել Հայաստանի եւ Ազգային Կառուցման հանդիպումները:

ԶՕՐ. ՏՈՅԿԻ ԿՐ ՔՆՆԱԿԱՏԷ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐՊԷՅՔԱՆԻ ՄԷՋ ԹՐՔԱԿԱՆ ԽԱՐԻՍԽՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ


Ռուսիոյ դաշնակցային սահմանապահ ուժերու հրամանատար Կօր. Կոստանդին Տոկի Հայաստան իր աշխատանքային այցելութեան աւարտին կայացած մամուլի ասուլիսին ընթացքին յայտարարած է, թէ չ'ողջունէր Վրաստանի եւ Արդարացի մէջ ՕԹԱՆԻ անդամ երկիրներու, յատկապէս Թուրքիոյ, պինդորակալ խարխիւներ հաստատելու ծրագիրը: Ան յայտնած է, որ արդարանալի պատճառ չի գտներ նման քայլի մը համար:

Զօր. Տոկի նշած է, որ ՕԹԱՆԻ անդամ երկիրներ կը պատճառաբանեն, թէ վտանգ մը կը սպառնայ Վրաստանին եւ Արդարացիին, «սակայն ոչ Ռուսիա եւ ոչ այլ շրջանային այլ պետութիւններ կը սպաննան Վրաստանի եւ Արդարացիի անվտանգութեան», աւելցուցած է ան: «Կայ Լեոնային Ղարաբաղի հարցը, սակայն Հայաստանի եւ Արդարացիի նախագահները հետեւողականօրէն հաստատած են, թէ տագնապը պէտք է լուծուի բացառապէս խաղաղ միջոցներով», ընդգծած է Տոկի:

Ռուսիոյ դաշնակցային սահմանապահ ուժերու հրամանատարը շեշտած է, որ թալեպանի վարչակարգին դէմ պինդորակալ գործողութիւններու աւարտին ետք ոչ մէկ պատճառ կը տեսնէ դէպի Ռուսիոյ, Արդարացի եւ Կեդրոնական Ասիոյ արեւմտեան սահմանները ՕԹԱՆԻ մերձեցումին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅՐԵՆԻ ՉԱՒԱԽՔ



«Ազգակ» յատուկ հրատարակութիւն: 496 էջ:

●Ստանալու համար դիմել գրախանութներ՝ Համազգային, Նարեկացի, Ոսկեղար, Ուրֆալեան եւ Կոմիտաս:

●Բովանդակութիւնը տեսնել՝ էջ 2:

ԳԻՆ՝ 15.000 Լ.Ո.

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Նախարարաց խորհուրդը երեկ յետմիջօրեին գումարում էր ժողովին ներքին գործոց նախարար Էլիաս Մըրթնի տեղեկացում նախկին նախարար Էրեմիայանի Էլիաս Հրպեյքյաի սպանության նախնական տուեալներուն:

Նախարար Մըր նախարարաց խորհուրդին փոխանցեց, որ յառաջիկայ 48 ժամերուն շատ հաւանաբար որոշ տեղեկութիւններ հաւաքուին դէպքին շուրջ:


Տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտի յայտնեց, որ Հրպեյքյաի սպանութեան մասին ելուցող տեղեկութիւններու հասնելու համար պէտք չէ անապարել, այլ պէտք է սպասել կացութեան եւ իրողութեան յստակացման:

Միւս կողմէ, նախարարաց խորհուրդը տոքթ. Մոհամէտ Քարաքին նշանակեց Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկի տնօրէն, Մոհամէտ Իսր՝ արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր տնօրէն, դատախազ Նասրի Լահուտը՝ վճարակ ատեանի առաջին նախագահ:

Քանի մը նախարարներ արժարժած են իրենց Ծար.ը՝ էջ 10

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ ԵՒ...

Շարունակուած Ա. Էջէն



Բանակայիններ կը քննեն Հրպեյքյաի քանդուած ինքնաշարժը:

ղովի մը նախագահէլէ ետք ըսաւ, որ ոճիրը կը կրէ իսրայէլեան գաղտնի սպասարկութեան մատնահետքերը, մանաւանդ որ կոհը բազմաթիւ առիթով ներքին հաւաստած էր, որ Սապրա-Շաթիլայի շարդին գծով վկայութիւն պիտի տայ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի դէմ:

Մըր պայտուէն անմիջապէս ետք փութացած էր դէպքին վայրը եւ բանակի ու ներքին ապահովութեան ուժերու ականներու մասնագէտներէն ծանօթացած նախնական տեղեկութիւններուն:

Դէպքին վայրը փութաց նաեւ պիւտրակայն ատեանին մէջ կառավարութեան լիազօր ներկայացուցիչ Նասրի Լահուտ, որ յայտնեց, թէ պիւտրակայն ատեանին մէջ ստանձնած է հետաքննութիւնը: Նախնական տուեալներու հիմամբ, Իսրայէլի պատահականապէս տուութեան մասին խօսելով Լահուտ ըսաւ, որ առկա պատեղաբանութիւնը Լիբանանի մասին տեղեկացումները քիչ են, այլ անհատապէս Հրպեյքյաի դէմ արարք մը:

Լեռնայի իրանահի շրջանային դատարանի Գաբի Ֆահու դէպքին վայրը այցելելէ ետք յայտնեց, որ ակասը պետեղուած էր «Մերսեդէս» տիպի ինքնաշարժի մը մէջ, որուն շասէին թիւը ջնջուած է:

Ընդհանուր դատարանի Ատնան Ատտում Նասրի Լահուտէն եւ անոր օգնական Սամի Սըտրիէն տեղեկացաւ նախնական տուեալներուն մասին եւ տուաւ ցուցմունքներ: Միւս կողմէ, պէլճի-քացի ծերակուտական ժուլէ Տիւպի դէպքէն

ՆԱԽԱԳԱԿ ԼԱՇՈՒՏ

Նախագահ Կօր. Էմիլ Լահուտ դատապարտեց ոճիրը, հաստատելով, որ անիկա կը հետապնդէ բազմաթիւ նպատակներ:

Ծար.ը՝ էջ 10

Յ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ՝ ԶԱՅԱՍՏԱՆ - ԼԻԲԱՆԱՆ ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Երեկ՝ Հինգշաբթի, 24 Յունուարի առաւօտեան ժամը 11:00ին, Կեդրոնական Դրամատան չորրորդ դիւր կառավարիչ Յարութիւն Սամուէլեան Կեդրոնական Դրամատան իր գրասենեակին մէջ լիբանանահայ մամուլի ներկայացուցիչներուն հետ ունեցաւ հանդիպում մը, որուն ընթացքին ներկայացուց Լիբանանի եւ Հայաստանի Կեդրոնական Դրամատան ներկայի փոխարարներու փոխարարութիւններուն բնոյթն ու ընթացքը:



Յ. Սամուէլեան

Ան նշեց, որ այս փոխարարութեան հիմնական առանցքը կը կազմեն ստորագրուած համաձայնութիւնները, որոնք կը թողարկեն երկու երկրներուն դրամատարներուն միջև: Ինչպէս նաեւ ելեկտրոնային, արհեստագիտական եւ հսկողութեան մարզերէն ներս տեղեկութիւններու փոխանակում եւ ներկայացուցչական գրասենեակներու հաստատում: Այս աշխատանքները կը շարունակուին:

Յ. Սամուէլեան յիշեցուց, որ 2001ի ընթացքին Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիտա Սալամէի հետ աշխատանքային այցելութիւն մը իրականացած էր դէպի Հայաստան, ուր հիմնական բանակցութիւններ կատարած են Հայաստանի Կեդրոնական Դրամատան հետ եւ վերատեսչ:

Յիշեցնենք, որ պէլճիքական ծերակուտական պատուիրատուներու Լիբանան այցելած էր իշխան դատարանութեան մասին տեղեկութիւններ քաղելու համար:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Եռլանտ Աճէմեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Վիգէն Թորիկեան 500,000 Լ.Ն. Համագայիին Մեթրոպոլիտէն Կոլեջին Հայկական Համարանին: Ծովակ Խաչէրեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Վիգէն Թորիկեան 500,000 Լ.Ն. Լ.Օ. Խաչի Շրջանային Վարչութեան:

ՔԱՂԱՔԻ ԺՈՂՈՎՐԳԱՅԻՆ ՏԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Դասախօսութիւն Երբ՝ TVA (ՅԱԵԼԵԱԼ ԱՐՃԵՐ ՏՈՒՐԵ) Կը գեկուցէ՝

ՊՐՆ. ՅԱԿՈՒ ԱՐԱՎՃԱՄԵԱՆ (Երդուեալ հաշուեքննիչ)

Տեղի կ'ունենայ այսօր՝ Ուրբաթ, 25 Յունուար 2002, երեկոյեան ժամը ձիշ 8:00ին, Լշան Փալանճեան ձեռնարանի «Վասպուրական» սրահէն ներս:

Գրատուն ՈՍԿԵԴԱՐ

- Ունինք ձեր փնտռած գիրքերը եւ բառարանները
- Ոսկեղարի ԵՐԱԶԱՀԱՆԸ, Երգարան եւ Մանկական գիրքեր
- Զարգացումի միահատոր Համայնագիտարաններ՝

Պուրճ Համուտ, Ս. Փրկիչ եկեղեցոյ կից Հեռ.01/264750 P.O.Box 11-8877 Beirut Lebanon

ՃԵՄԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԲՐՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԵՒ ՆՈՐ ՇՐՋԱՆԱԲՐՏՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 27 Յունուար 2002, կէսօրը ետք ժամը 3:00ին, «Մելանքոն եւ Հայկ Արսլանեան» ձեռնարանէն ներս:

3. Գ. - Բ. ճիստ, կէսօրը ետք ժամը 4:00ին: ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԼՕԽԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԶՈԳԵՅԱՆԳԻՍ

ՅԻՇԱՏԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԸՆԿԸ. ԾՈՎԱԿ ԽԱԶՆԵՐԵԱՆԻՆ

Հայ Աւետարանական Էմմանուէլ եկեղեցոյ մէջ, Փրքըր եւ Էլիզապէ Թորոսեան վարժարանին կից, Կիրակի, 27 Յունուար 2002, առաւօտեան ժամը 10:00ին, պաշտամունքի ընթացքին:

ՀԱՅՐԵՆԻ ԶԱՒԱՍԻՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Մէկ ապգ Կարանի Փափագեան
- Ախալքալակի պայքարը Ռուբէն
- Տաշիրի գաւառին բռնագրաւումը Ռուբէն
- Ընդհանուր ակնարկ Հայաստանի հիւսիսային սահմաններին վրայ Լէօ
- Ջաւախքի պատմութիւնը Աշոտ Մելքոնեան
- Ջաւախքի արեւմտահայ պատմագրական պայքարում Աշոտ Մելքոնեան
- Ախալքալակի հայ համայնքին պատմութիւնը Փրք. Գ. Գ. Ղաֆարեան
- Տանջուած ժողովուրդի մը շքանդ հայրենիքը՝ Վ. Աւագեան
- Արցախեան պատմամարտին ջաւախքի նահատակները
- Հոգեւոր - եկեղեցական կեանքը Ջաւախքում Աշոտ Մելքոնեան
- Նորօրէնայ հոգեւոր կեանքը հինաւորը Ջաւախք աշխարհում Սանասար սարկաւազ Ղուկիեան
- Ջաւախքի մշակութային կեանքը
- Ջաւախքի գեղանկարչներու եռեակը Շալվազուհի Ավրեան
- Ջաւախքի աշուղները Մովսէս Միրանի
- Նշանաւոր ջաւախքիներ Ջաբար Քէշիշեան
- Ջաւախքի կրթական համակարգը Եւ. Նաւոյեան
- Հայ մամուլը եւ գրատպութիւնը Ջաւախքում եւ Մեծիկեթում Վահան Մաղախեան
- Բաց դարպաս՝ սահմանէն անդին Շողիկ Աւրեան
- Ջաւախքի պատմական յուշարձանները Մամուէլ Կարապետեան
- Վրաստանի քաղաքականութիւնը հայկական մշակութային կոթողներին նկատմամբ Մամուէլ Կարապետեան
- Հայ - վրացական փոխ յարաբերութիւնները Ռոստոմ
- Հայ - վրացական կնճիղը Արշակ Ջամալեան
- Մենք եւ մեր հարեւանները Արտաշէս Արեղեան
- Հայ - վրացական յարաբերութիւնները ժամանակակից փուլում Սերգէյ Շաքարեան
- Վրաստանի անկախութեան աղբիւրը եւ հայ - վրացական յարաբերութիւններուն հեռանկարը Ռիչարտ Կիրակոսեան
- Խաչիկ Տէր Ղուկասեան
- Թիֆլիսի հայութիւնը Օֆելիա Գրիգորեան - Շահբաբեան
- Արխալիայի հայկական համայնքը Շալվազուհի Ավրեան
- Աջարական հանգոյց Մամուէլ Էփոյեան
- Վրաց քաղաքական մտեցումները Ախալքալակ - Ախալքալակ գոտու մահմեդական բնակչութեան ինդիքի առնչութեամբ Մամուէլ Կարապետեան
- Ռազմական համագործակցութիւնը Ռուսաստանի դաշնութեան եւ վրաստանի միջեւ Օ. Ս. Բելով
- Չէչենական ինդիքը վրաց - ռուսական յարաբերութիւններում Մամուէլ Էփոյեան
- Թուրքիա - Վրաստան - Ադրբեջան փոխ յարաբերութիւններին հեռանկարի հարցի շուրջ Էդուարդ Ղազարեան
- Վրաստանի եւ ՄՄԻ յարաբերութիւնները Ս. Ա. Միրանով
- Վրաստանի արտաքին քաղաքականութեան կերպարանափոխութիւնները Սերգէյ Շաքարեան
- Հայոս եւ Քարթլոս Լէոնտի Մրովիկի
- Ընդհանուր տեղեկութիւններ Ջաւախքի մասին

Հ. Մ. Բ. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Կը ներկայացնէ՝ ՄԱՆՍՈՒՐ ՌԱՎՊԱՆԻ ԿՐԻՍՏՈՒՆԱԳՊԻ Թատրերգութիւնը

Տեղի կ'ունենայ Կիրակի, 3 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 8:30ին, «Տորիւմ տըր Պէրլուր» մէջ: • Տոմսերը ստանալ «Ռոճէ Սիմոն» եւ «Միլաթ» (Ժէլ Էլ Տիպ), JACK GIFTS եւ PRONTO հաստատութիւններէն (Պուրճ Համուտ): • Մանրամասնութեանց համար հեռաձայնել 03-918372 թիւին:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀՐԱԷՐ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՎԱՀԱՆ ՀԱՃԵԹԵԱՆ ՏԻԿԻՆ ՌՈԶԻՆ ՔԵՇԻՇԵԱՆ

Սիրով կը հրաւիրեն պաշտականներու ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց պատկերներուն՝

ՐԱՅՖԻԻ ԵՒ ՇԱՂԻԿԻ

ՍՈՒՐԲ ՊԱՍԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ, որ տեղի կ'ունենայ Կիրակի, 27 Յունուար 2002, երեկոյեան ժամը 7:00ին, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, Պուրճ Համուտ - Պէրլուր: Խաչէրախարութեամբ՝ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՄԵԼԱԿ ՌԱՍՏԿԵԼԵՆԵԱՆԻ • Ներկայ ընդունիլ իբրեւ անձնական հրաւեր: • Շնորհաւորութիւն՝ տեղւոյն վրայ:

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԱՆՈՒՄՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Ս. Սարգիս Չորավարի տօնին առիթով, Կիրակի, 27 Յունուար 2002ին, համդիսաւոր Ս. պատարագ պիտի մատուցուի եւ պիտի կատարուի մատաղօրհնէք: Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՂՍ. ԽԱԶՆԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Սկիզբ ժամերգութեան ժամը 7:30 Առաջնորդի ժամանում ժամը 9:00 Ա. պատարագ ժամը 9:30 Զարոզ ժամը 10:30 Մատաղօրհնէք ժամը 11:30

Սիրով կը հրաւիրենք բարեպաշտ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Ս. պատարագին եւ հաղորդուելու օրուան խորհուրդով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻՈՅ

